

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹ ԴՈՒՐԵՐԸ — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագիրն ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 զրշ: Վեցամսեայ 23 զրշ: Եռամսեայ 12 զրշ: —
Գաւառաց համար տարեկան 50 զրշ: Վեցամսեայ 26
զրշ: Եռամսեայ 14 զրշ:

Ռուսիոյ համար տարեկան հինգ ռուբլի: Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապագի կը զրկուի: Այնուհետեւ
բաժանորդագիրն չը վճարողը կը դադարի թերթ ընդու-
նելէ:

Դրանուցման տողը 2 զրշ:

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Բ Ա Գ Ի Ը

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ Ի Վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

Պոլիս, Էսկի-Չապիթէ, Պէրպէրեան Տպարան

درعليه ده اسكي ضبطيه زقاعنده بربريان مطبعه سنده

« زايگك » غزته سى مديرى پالاقشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian

CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԱՅԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻԻ 31

ՇԱԲԱԹ

13 ԱՊՐԵԼ 1894

ԱԶԳԻ «ԾԱՂԻԿ»

Գաւառներէն յաճախ նամակներ կ'ըս-
տանամք, որոցմով «Ծաղիկ» զրկել կը
խնդրուի՝ բաժանորդագիրն յետոյ վճար-
ուելու խոստմամբ: Կարեւոր կը համարուիմք
մի անգամեւս յայտարարել, թէ «Ծաղիկ»-ի
բաժանորդագիրն ԿԱՆԻՍԻԿ է. հետեւեալ
աւելորդ աշխատութիւն է նամակ գրել
մեզ և բաժանորդագրութիւն առաջար-
կել՝ առանց բաժանորդագիրն նամակին
մէջ ներմակելու: Այդ կարգի նամակներ
կը մնան անհետեւ:

ՅԱԿՈՐ ՊԱՐՈՆԵԱՆ

Ազգային նշանաւորագոյն գրագէտ
Յակոբ Էֆ. Պարոնեան ծանր հիւանդու-
թեամբ կը տառապի անկողնոյ մէջ: Ղինքը
ճանչողներ առ հասարակ տխրութեամբ
համակուած են: ամէն տեղ կը խօսին Ազ-
գային Զոյնը, Մեծապատիւ Մուրաց-
կաններու անդուգական հեղինակին հան-
ճարոյն, ուղղամտութեան և բարեհամ-
բոյր բնաւորութեան վրայ: Հայ Ազգն իւր
գիտնոց, արուեստագիտաց, իմաստասի-
րաց, գրագիտաց, բանաստեղծից և այլ
բաղմահմուտ մեծ անձնաւորութեանց մէջ
ի սկզբանէ ցայսօր մի միակ հանճար ունե-
ցած է, և Յ. Պարոնեան եղած է այդ
հանճարին անձնաւորումը: Մեր գրակա-
նութեան բաղմապիտի արդիւնքէն ճաշակ
առնելու համար՝ օտարը ոչ այնքան ինք-
նատիպ ու հրապուրիչ գրուածներ պիտի
գտնեն՝ որքան Յ. Պարոնեանի երկերը,
որոց իւրաքանչիւր տողին մէջ մեծ ու խո-
րին իմացականութեան մ'ի խիստապ-
հանճար կոչուելու գիւտոց արտադրու-
թիւնը կը փայլին: Իբր պատմագէտ, ըն-
կերարան, իմաստասէր, լեզուագէտ, տը-
րամբան ու հաշուագէտ, Յ. Պարոնեան
էֆ. յաջողապէս մըցած է իւր ազգակցաց
երեւելի ուսումնականներուն հետ: Այլ
իւր գրուածոց ինքնուրոյն ոճը, բաղմա-
բեղուն ու նոր բացատրութիւններն և
հանճարեղ հնարամտութիւններն անման
ու անբաղդատելի գրագիտի մ'անունը
տուած են իրեն, և իրաւամբ: Ամենէն
գիւտարահաճ ընթերցողը իսկ իւր հեղի-
նակութիւնները կը կարգան միշտ առանց
ձանձրանալու և կը խոստովանին որ եւ-
րոպական ազգերն անգամ մտքի հաղուա-
գէտ ու բազմաւոր ծնունդ կը համարին
այն տեսակ գրուածները:

Յ. Պարոնեան էֆ. ուղղամտ է այն-
քան որքան մեծ գրագէտ: Իւր համո-
զումներուն ծառայեցուցած է իւր գր-
րիչը, և եթէ իրմէ գիտնական եղած են
իւր ուղղամտութեան համար, ժողովուր-
դին ընդհանրապէս իւր հանճարոյն ուրան-
չացողը լինելով հանդերձ՝ իւր սրտին բա-
րութեան և ուղղամտութեան համար միշտ
կը սիրէ ու կը յարգէ զինքը, երբեմն մաս-
նաւորներէ զրկանք ու վնաս կրած և թըշ-
նամութիւն ալ տեսած է, բայց «աւելի
կը սիրեմ խոտ ուտել և ուղիղ մարդ մնալ
քան պնակ լիղել և բարիք վայելել» կ'ը-
սէր: անգղայ չէ իւր նմանեաց տարաբաղ-
դութեան, ժպիտով կը ձաղկէ մոլու-
թիւնները, անիրաւութիւնները՝ նոյն իսկ
ընկերակցութեանց մէջ: Մի օր քանի մը
բարեկամը հանգանակութեամբ սեղան մը
պատրաստեցինք: Յ. Պարոնեան էֆ. ևս
միտսին էր, անշուշտ նախապէս վճարելով
իւր բաժինը, զի երբէք այլոց բեռ լինել
չկա իր: Հանդիսադրին ժլատ խնայողու-
թիւնը մեզմէ չատերուն գգալի եղաւ,
այլ ո'վ պիտի ընէր պարսաւը: սեղանին
սկիզբը Պարոնեան էֆ. սկսաւ երգել սահ-
մանադրական ծանօթ երգի մը մի քանի
տողերը, և քրքիչները բարձրացան: հան-
գիտագիրն ստիպուեցաւ մեր վճարմանց
համեմատութեամբ աւելցունել ուտե-
լեաց և ըմպելեաց քանակութիւնը: Ժի-
ծաղն յաղթանակից չնորհիւ երգչին:

Այլ Պարոնեան էֆ. անման հրապոյր ու-
նի թէ՛ իւր գրուածոց և թէ՛ խօսիցը մէջ:
ուրիշ բան կ'ըսէ և ուրիշ բան կը հաս-
կըցունէ: Խորին ու մեծ իմաստ կայ առ-
երեւոյթս պարզ ասացուած իններքեւ. գեռ
քանի մ'օր յառաջ բարեկամ մ'այցելու-
թեան դնացած էր իրեն և ըսած թէ Պ.
... յօգուածով մը ձաղկեր է բանագողե-
րը, այսինքն զանոնք որ օտար հեղինակ-
ներու մտածութիւնները գողնալով իբր
իրենցը կը կենցնեն: «Եթէ Պ. ... վաճա-
ռական լինէր, կենաց մեծ մասը բանտի
մէջ պիտի անցունէր» կը պատասխանէ
Պարոնեան, և ստուգելու Պ. ... մեծագոյն
բանագողներէն մին է Հայ գրագիտաց
մէջ...

Կը մաղթեմք որ ներկայ ծանր հիւան-
դութենէն ապաքինի Պարոնեան էֆ. և
ի գլուխ հանէ իւր հանճարոյն գլուխ
գործոյն, որոյ յատակագիծը կազմ ու
պատրաստ է արդէն: Երկու տարի յա-
ռաջ այս տողերը գրողին կը գիմէր հա-
մակրելի գրագէտն և թէոլորատի, Լապ-

րիւէրի, Մոլիէռի ըրածէն աւելին մտա-
դրած լինելը կը յայտնէր: մարդը նկա-
րել կ'ուզէր թերի, ապականեալ կողմե-
րէն: Իբր աշխարհիկ և իբր կրօնաւոր,
Մաքիավէլ ապականութեան մէկ անկիւնը
միայն ի տես հանած էր: Մոլիէրի Դաւ-
դիւն հրաշալիք մ'էր, սակայն վատթա-
րագոյն մարդոյ բովանդակ մոլութեանց
նկարագիրը լինելէ շատ հեռի: Ինքը Պա-
րոնեան, երկու հարիւր ոսկի կը խնդրէր
երթալ աշխարհի ամէն կողմը շրջելու, ըն-
կերային ամէն խաւերն յուզելու և մտքին
տիպարներ գտնելու համար: անկարելին կը
խնդրէր: քանի մ'ամիս յառաջ ուրախու-
թեամբ, քիչ մ'ալ տխրութեամբ, կ'ըսէր:
« Կը փափաքէի որ վնասած տիպարներս
իրականութիւն չունենային, կամ գտնէ մեր
կիսագունտէն դուրս ապրէին, այլ մեր
մօտը գտայ զայնս: ամէն չարեաց, մոլու-
թեանց ու ապականութեանց կրկին սա-
փորները...»: Ուրեմն երբ Աստուած հաճի
պարգեւել մեզ զՊարոնեան, պիտի ունե-
նամք Հայ Մոլիէրին գլուխ գործոցն, և
Հայ գրականութիւնը քիչ ատենէն պիտի
փառաւորի անմահ փառօք:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ազգային առաջնակարգ հեղինարան և
հանճարեղ գրագէտ Պարոնեան Յակոբ Էֆ.
վերջին ժամանակներս բաւական ծանր հի-
ւանդութեան մը ենթարկուած լինելով, բա-
րեկամներէն շատեր այցելութեան կ'երթան
յժրթագիւղ իւր բնակարանը:

Շաբթուս այցելեցին ոչ միայն գրագէտ
բարեկամք, այլ և Վսեմ. Գաղազեան Յակոբ
փաշայի Ազնուաշուք Գոյրն՝ Տիկին Տէրուն-
եան, իւր Մեծ. ամուսնոյն՝ Տէրունեան Կա-
րապետ էֆէնտիին հետ, և մխիթարեցին հա-
մակրելի հիւանդը:

Կ'արժէ որ ազգայինք ամենուրեք փութան
նուիրահաւաքութեան ձեռնարկել մի քանի
կեդրոն տեղերու մէջ մասնախումբեր կազմե-
լով, ինչպէս սիրոյ և համակրանաց առ ազգա-
յին հանճարեղ գրագէտն Յակոբ Պարոնեան,
իւր տառապանաց աւուրց մէջ մխիթարելու
համար զինքն:

— Կիմանամք թէ Ս. Պատրիարք Հայրը՝
Կիլիկիոյ Վեհաշնորհ Տ. Տ. Մկրտիչ Կաթո-

զիկոսին գիր մը ուղղելով՝ արտօնած է ներկարարեան Գեր. Տ. Պետրոս Մ. վարդապետը՝ պաշտօնավարել Կիլիկիոյ հայրապետութեան իրաւասութեան ներքեւ գտնուող թեմերուն մէջ:

— Գաւազդիւղի քարոզիչ՝ Ամեն. Տ. Մեկքիսեղեկ Սրբազան Արքեպիսկոպոս, անցեալ շաբաթ առաւօտ՝ յատուկ կանանց համար՝ Ս. Լուսաւորչայ տօնի տաթիւ գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ, ինչպէս նաև կիւրակէ առաւօտ ալ՝ օրուան Աւետարանին համեմատ՝ Սաղմուկեցիներն ու Փարիսեցիները նկարագրեց խիստ զգայուն լեզուաւ և գեղեցիկ բացատրութեամբ:

Գոհութեամբ կը լսեմք թէ՛ ունեկէրի ժողովրդեան մէջէն՝ Մեղպոլեան, Արամեան և Հոմ վարժարանաց նախկին սանուհիներէն ուսանք, ինչպէս նաև գիւղին ուսումնական և ճաշկատէր երիտասարդներէն ուսանք, հետեւեալ է ի գիր կ'առնուն սոյն քարոզներն, պահելու համար՝ իր յուշատետր մը պերճախօս բեմասացութեանց Ամեն. Տ. Մեկքիսեղեկ Սրբազանի, որ անգամ իսկ պատանեկութենէ՝ եկեղեցւոյ մէջ քարոզ խօսելու համար յատկապէս արտօնուած է երջանկայիշատակ Աշտարակեցի ներսէս Ե. Կաթողիկոսէն, ոսկեհոռ ուրար մը ընդունելով նորին Աստուածաբան Սրբազանութենէն:

Այս առթիւ աւելորդ չեմք համարիր յայտնել թէ՛ վերջնթեր կիւրակէ առաւօտ, յետ ժամերգութեան՝ ի գիւմաց գիւղին Թաղական Խորհրդոյ, Սարգիսօֆ Գառնիկ և Թօփալեան Գէորգ էֆէնտիներն՝ Ամեն. Տ. Մեկքիսեղեկ Սրբազանի խօսքն երթալով, շնորհակալութիւն յայտնած են տրուած խնամատիւ քարոզներուն համար, ինչպէս նաև անցեալ կիւրակէ օրն՝ նախ Թաղական Խորհրդոյ անգամ՝ Նաղաշեան Գրիգոր էֆէնտին և Թաղեցիներէն Կամսարական Խաչիկ էֆէնտին, և ապա սանձիկն՝ Վսեմ. Արիկ էֆէնտին Ունձեան, իրենց գոհունակութիւնն արտայայտած են նորին Ամենապատուութեան աւետարանաչունք քարոզութեանցը համար:

— Գոհութեամբ կը հրատարակեմք թէ Ազգ. Ս. Փրկչեան Հիւանդանոցի պատասխարեալք, այժմ թուով 744, հետզհետէ կը տեղաւորուին նորոգ շինուած մասանցը մէջ: Սոյն հայկապ շինութեանց համար գլխաւորաբար ստատարած են Աղնուաշուք Կիւլպէնիեանք և Յակոբեանք՝ նուիրելով 4000 տական սկիւ: Մարտան շինութիւնն ստանձնած է Կիւմուշկերտան Տիգրան էֆէնտին: Մնացեալ յարկերուն շինութիւնը պիտի սկսի, երբ անգ քանուած հողերուն մէկ մասը միւլի վերածուին. այս գործողութիւն աւարտելու մօտ է կ'ըսուի:

Գոհեմք նաև լսելով որ Հիւանդանոցի զօպաներուն թիւն կրկնապատուած է այս տարի, շնորհիւ Զօպաճի-Պաշի Ղազարոսեան Մեծ. Բարսեղ էֆէնտինի, որ ուրիշ առիթներով ևս իւր օժանդակութիւնը չէ զլացած սոյն ազգային յարկին:

— Կովկասէն կը գրեն թէ Ամեն. Տ. Մեկքիսեղեկ Սրբազան Մուրատեանցի աւագ եղբայր և Մուրատեանց տան Նահապետ Տէր Յարութիւն Աւագ Քահանայ Մուրատեանց, 36 տարի արժանաւորութեամբ պաշտօնավարելէ զինի, կնքած է իւր երկրաւոր կեանքն ի 24 յունուարի, Տաւուշ պատմական գիւղին մէջ (ծննդավայր Միսիթարայ Գօշի) որու վերայ ձեռնադրուած էր ի տեղի իւր լուսահոգի հօրն՝ Տ. Գրիգոր քահանայի:

Հանգուցեալ մահուան վերջին րոպէներուն մէջ քանիցս ըսած է հաւաքանօք. «Այն, չը տեսայ, չը տեսայ անգամ մի ևս սիրելի և աննման եղբայրս՝ Գարեգինը (Մեկքիսեղեկ Սրբազան), ա՛յն, գրեցէք որ չը տրտմի. ես խաղաղութեամբ կը մեռնեմ»: Տէր Յարութիւն կը թողու ուսեալ և կրթեալ զաւակներ ու թոռներ, իսկ իրեն յաջորդելու համար մի քահանայացու ուսեալ և շատ սիրուն որդեակ: Մուրատեանց եղբայրք վեց էին թուով, չորսն փոխուած են յաշխարհէս. կը մնան միայն Ամեն. Մեկքիսեղեկ Սրբազանն և եղբայրն Եփրեմ:

— Ամէն անգամ երբ պարտաճանաչ երեսփոխանք և ժողովրդեան հետաքրքիր մասն փորձուին հետաքրքրուիլ թէ ի՞նչու համար չը գումարուիր Ազգ. ժողովն, իսկոյն տեղական օրագրաց մէջ վերստին հրատարակութեան կը տրուի հետեւեալ վիճաբան մշտնջենական հազներգն.

«Մայրաքաղաքիս 75 զրուշ և աւելի տուրք վճարող ազգայնոց ցուցակները Թաղական Խորհրդոյ կողմէ՛ ըստ հրահանգի վերաբնակած և անձնական արժանեօք ընտրող համարելի թաղեցւոց անուններովն հանգերձ Պատրիարքարանի հաղորդուած լինելով, երեսփոխանաց բաշխման կարգադրութեան համար յառաջագոյն կազմեալ յանձնաժողովոյ անդամները հրաւիրուեցան նոյն ցուցակներն ուղարկութեան առնելու, երեսփոխանական ընտրողայ թիւը ճշդելու, բաշխումը կատարելու և արդիւնքը տեղեկագրելու համար:

Սոյն յանձնաժողովոյ անդամք են՝ Վսեմ. Նուրեան էֆէնտին, Վսեմ. Ստեփան փաշա և Մեծ. Ռէթիս էֆէնտին Պէրպլեան:

— Վսեմ Պատրիարքական փոխանորդ Արթ. Յովսէփ Մ. վարդապետ Յ. Կաթական Զատիկեան տօներէն անմիջապէս յետոյ իւր պաշտօնատեղին՝ Վսեմ. պիտի ուղևորի:

— Կարինէն «Արեւելք» ուղղեալ թղթակցութեան մը մէջ կը կարդամք թէ՛ տեղւոյն Գաւա. Բնդհ. ժողովոյ վերջին նստին մէջ, երեսփոխանութիւնը գիտողութիւններ ըրեր է՝ Պատրիարքարանին ուղղուած Առաջնորդական խմբոյն նկատմամբ ցարգ տասնէն աւելի հեռագրաց ու նամակաց անպատասխանի թողուելուն դէմ, և պաշտօն յանձնէր է իւր Գիւանին որ անգամ մի ևս հեռագրով խնդրէ Պատրիարքարանէն այդ մասին անմիջական տնօրինութիւն «Կ'իմանամք հաւաստեօք թէ՛, կը յարէ թղթակցը, եթէ Ազգ. Պատրիարքարանն այս անգամ ևս անլսելի թողու առ ինքն ուղղուած վերջին հեռագիրն և նամակներն, երեսփոխանութիւնն ինքնաբերաբար պիտի ընտրէ իւր առաջնորդն ըստ Ազգային Սահմանադրութեան, մանաւանդ որ մինչեւ ցարգ գիրքը կաշկանդող պատճառն ալ վերցուած է այժմ. զի՛ ինչպէս կը լսեմք ստոյգ աղբիւրէ, Գեր. Ղեոնդ եպիսկոպոս զրկած է առ Ազգ. Պատրիարքարան Խորհրդի Առաջնորդութենէն իւր հրաժարականը՝ թախանձանօք և ստիպմամբ տեղւոյս Կրօնական ու Քաղաքական ժողովոյ»:

Չորեքշաբթի առուր Բաղ. ժողովն զրաղելով Կարնոյ Գաւառական Վարչութեան՝ առաջնորդական ընտրութեան հրահանգ խնդրելու, ինչպէս նաև Գեր. Ղեոնդ եպիսկոպոսի հրաժարականի խնդիրներով, որոնց պատասխանելէ ն. Գերապատուութեան թէ՛ այդ խընդիրք Խառն ժողովոյ տնօրինութեան վերապահուած լինելով, յետ Զատիկի կրնան նկատողութեան առնուիլ, թէ՛ նոյն իսկ Խառն

Ժողովոյ նախորդ մէկ որոշմամբ առաջնորդի ընտրութիւնն առ այժմ յետաձգել պատշաճ դատուած, և այդ որոշումն արդէն իրեն Գեր. Ղեոնդ Սրբազանի ծանուցուած, և յանձնարարուած լինելով սպասել կեդր. Վարչութեան տնօրինութեան, կը պարտաւորի շարունակել իւր պաշտօնը մինչև որ պարտաւորապէս տնօրինուի:

— Լրագիրք հրատարակեցին թէ Ազգային Մատենադարանի Հիմնադիր-Տնօրէն հանգուցեալ Արշակ Յակոբ էֆէնտինի եղբայր Գաւ. րիկէ էֆ. Գորունով Ուսումն. Խորհրդոյ կողմանէ քանիցս հրաւիրուելով յանձնելու Մատենադարանին բանալիները, դժկամակութիւն ցոյց տուեր է, որով Բաղ. ժողովը պարտաւորեալ է վերջին զեկոյց մ'ընել Գաւ. րիկէ էֆէնտինի, որոշելով որ, հաւանի կամ ո'չ, մատենադարանը բացուի և պարունակեալ գոյքն յանձնուին նորընտիր Տեսուչ Արթ. Տ. Մկրեան Հօր:

Արեւելի երեքշաբթի առուր թուով Գաւ. րիկէ էֆ. նամակ մը կը հրատարակէ, որով կը յայտնէ թէ ինք ոչ թէ մերժած է յանձնել բանալիներն, այլ յանձնելու համար պայման դրած է որ Մատենադարանի արդի գոյն մի վաւերական ցուցակը պատրաստուի նախապէս. սոյն համետ և արդար առաջարկ մերժուել է Ուսումն. Խորհրդոյ անդամոց և Տ. Մկրեան Հօր կողմանէ որք միանգամայն սպառնացեր են առանց իւր միջնորդութեան բանալ տալ Մատենադարանի բանալիները:

Օրինաւորութիւնը կը պահանջէր ընդունելով Գաւ. րիկէ էֆէնտինի առաջարկն, մի առ մի արձանագրել յանձնուելիք գոյքերն. «այսպիսով լաւագոյն կերպիւ չալիտի տեսնուէր միթէ նորընտիր Տեսչին ապագայ աշխատութեանց արդիւնքն, որ գուցէ շատերուն մըտքին մէջ տարակուսանաց տեղի տայ այժմ»:

— Ս. Պատրիարքն ազգային առանձնաշնորհմանց ծանօթ խնդրոյն առթիւ Բ. Դըրնէն վերջերս ի Պատրիարքարան հաղորդուած պաշտօնագրին համար յատկապէս շնորհակալեաց ուղերձ մը պատրաստել տալով, մատուցեր է կայսերական պալատն:

Միւս կողմանէ, ձեռիսէյի Շարգիլէ երեքշաբթի ծանոյց թէ, ի նշան կայսերական յատուկ համակրանաց, նորին Սրբազանութիւնը Արքունի պալատն հրաւիրուելու բաղդաւորուած է՝ երեկոյեան ընթրիքին (իմքար) սեղանակից լինելու համար:

— Հրատարակեցինք արդէն էջմիածնայ Ս. Գէորգեան ձեմարանի Ա. Բ. և Գ. Բ. Լուս. րանի աշակերտաց անակնկալ արտաքրօն: Թէև Կովկասեան լրագիրք այս մասին բացատրութիւն մը, ըսյ մը չեն տար հետաքրքիր ծնողաց, բայց ստոյգ աղբիւրներէ լսուած է թէ՛ սոյն անհասկանալի տնօրինութեան պատճառն է ձեմարանին տեսուչ Նահապետեան Նահապետ արեղայն, որոյ աշխարհականութեան միջոցին ալ (Պ. Արշակ եղած ժամանակ) մի և նոյնը պատահած է թէ՛ Գէորգեան ձեմարանի և թէ՛ Տիմիտու Ներսէսեան վարժարանին մէջ՝ բարձրագոյն դասու աշակերտներէն քարկոծուելէ յետոյ:

Եւ սակայն զարմանալի չէ՞, որ այսպիսի տխուր անցեալ ունեցող և անհանդուրժելի դարձող մէկն Գէորգեան ձեմարանի պէս բարձրագոյն դպրոցի մը մէջ տեսուչ կը պահուի և անոր կը զոհուի ապագայ խոստացող անմեղ և հանձարեղ պատանեաց խումբ մը, իրենց չըջանն աւարտելու մօտ:

Ի՞նչ է ստոր գաղտնիքն, և ի՞նչ է լա-

ցառիկ արժանիքն Նահապետեան վարդապետին, որ խիստ թեկնածունքն է ասպագայ կաթողիկոսութեան, և միայն այս նպատակաւ սքեմ առած լինելն՝ հաւաստի աղբիւրներէ ստուգուած է:

— Ս. Պատրիարք Հայրն, Արմաշու իջնամակաւորութեան վերջին նստին առաջարկելու է Արմաշու վանահայրական դրութիւնը նախկին վիճակին վերածելով, Արմաշու իջնամակաւորութեան իւր անձին յատկացնել, իրեւ պատկաւը եւ պիտոյն Չարխաւիան Ս. Աստուածածնայ Աթոռոյն:

Խնամակաւորութիւնը՝ նկատելով որ Արմաշու վանահայրութիւնը վերջնականապէս որոշուած է Կ. Պօլսոյ Պատրիարքութեան տըրամադրութեանը տակ դնել, և յարակից վիճակ հռչակելով զայն՝ պատրիարքական Աթոռոյն Դարեւանքն անուանել, որոշել է անփոփոխ պահել զայս որոշումն:

— Սեւանիկի Հայ գաղթականութեան համար յատուկ մատուռ և սեփական գերեզմանատուն ունենալու համար տեղւոյն Արթ. Տ. Արսէն Աւագ-քահանայ Խաչոյեանի նախաձեռնութիւնը և տարած խնամքը անուրանալի է:

Վերջին ժամանակներս սոյն խնդրոց յաջողութեանը համար ոչ նուազ ջանքեր կ'ընէ Նորին Արժանապատուութիւնը, և այս մասին քանիցս տեղեկագրած է ի Պատրիարքարան, ու միշտ պղտտոնական խոստովներ ստացած:

Կը լսեմք թէ, հոսկ ապա խնդրագիր մը պատրաստելով՝ դիմած է ուղղակի կայսերական պալատն, և Վեհ. Սուլթանին գթութեանը դիմելով՝ Սեւանիկի Հայ գաղթական փառաբանաց իրաւորութիւնը խնդրած է թափանձագին:

— Զավայի Հայագգի հարուստ վաճառականներէն Պարոն Յ. Գ. Տէր Յովակիմեան նախորդ չարաթօր Անգլիայէն մայրաքաղաքս գալով, այս երեքշաբթի օր ուսումական շոգեհաւով ուղեւորեցաւ յերուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն Ս. Տեղեաց:

Պարոն Յովակիմեան կիւրակէ և երկուշաբթի օր այցելած է Ազգ. Պատրիարքարանը, Մայր եկեղեցին, Ներսէս Պատրիարքի և Տիգրան Զոհրաբի շիրմերը, Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին, Արուեստանոցն և ուրիշ մի քանի վայրեր: Զատական տօներէն վերջը վերադառնալով ի Կ. Պօլս, Մարտի 11 Ամերիկայի ճամբով ընդարձակ զրոտական ուղեւորութենէ յետոյ, Սան Ֆրանչիսկոյէն պիտի երթայ ի ձաւայ իւր ընտանեաց քով: Պարոն Տէր-Յովակիմեան ընդ Զուգայեցի է և անտի գաղթած է ի ձաւայ:

Ուղղակի ձաւայէն ևս մի քանի Հայեր ճամբայ ելած են Երուսաղէմ ուխտի երթալու. առաջին անգամն է որ ձաւայի Հայ ուխտաւորք պիտի երևին Սողոմոնի քաղաքին մէջ:

— Մարտին հաւատարմական հանրագիր մ'ուղղուած է առ Բարձր. Մեծ-Եպարքոսն՝ զայն յոտս կայս. գահոյց մատուցանելու խնդրանք: Հանրագիրն ստորագրած են, բաց ի Առաջնորդական փոխանորդէն և քահանայներէն, Տեառք Մուրատեան, Զորպաճեան, Պիլիգիլեան, Թովալեան, Սարայտարեան, Տիլչեքեան, Տուրպաճեան, Գուլումեան, Թանլիքեան, Մուրատեան, Մահիքեան, Ալիքսանեան, Մուրատեան, Զորպաճեան, Սափեան, Սիմոնեան, Պիլիգիլեան, Տ. Յովհաննէսեան, Տ. Մեհրապեան, Բարթոմեան, Սալպեան, Սէրճէնիկեան, Տատեան,

Ելմէնիճեան, Թովալեան, Բամուքեան, Ագրիպեան, Ալիքսանեան, Սալաթեան, Արիքեան, Պուրունուզեան, Արաքեան, Զաֆէրեան, Ալիքսանեան, Ճէպլեճեան, Բասարճեան, Մուրատեան, Կալէտէրեան, Սէրէթեան, Գուլումեան, Էթմէեան, Գանալուրեան, Գուլումեան, Առաքեան, Թարաքեան, Ճանուրեան, Հալէպլեան, Շամլեան, Բիւրքեան, Պուրունուզեան, Ապօեան, Զորպաճեան, Գարագուշեան և Պապրամեան:

— Երզնկայէն Տիգրան էֆ. Կիւմիւշէրեան և Ատանայէն Կիւլպէնէ էֆ. Կիւլպէնէեան Ազգ. Կեդր. երեսփոխան ընտրուած են:

— Ազգ. Կեդր. վարժարանի կողմանէ երախտագիտական և շնորհակալեաց ուղերձ մը մատուցուեցաւ երէկ Վեհ. Սուլթանին իւրեղէն Շէրիֆի հանդիսին առթիւ:

Կեդր. վարժարանի և նախակրթարանի աշակերտք, իրենց խնամակալներով և ուսուցիչներով ճամբուն երկու կողմը կ'անգնած լինելով, իրենց ձեռաց վրայ բարձրացուցած էին երախտագիտական ուղերձն, զոր գեղատառ պատրաստած էր Սալիկ էֆ. Թաթթաճեան, և զոր աշակերտք երգեցին եռաձայն Վեհ. Կայսեր յատուկ հրամանաւ՝ պալատական մ'ստացաւ ուղերձը:

Ստաղիւղի Գալֆայեան որբանոցի սանուհիք ևս Պոլսոյ կողմը Վեհ. Սուլթանին անցած ճամբուն վրայ կենալով, ծաղիկներ ի ձեռին մաղթանքներ երգեցին ձօնեալ առ Նորին Կայսերական Վեհափառութիւն:

— Սպարապետութեան Դրան թարգմանութեան սենեկի Տնօրէն Վսեմ. Միքայէլ էֆ. Մամիկոնեան՝ արձակուրդով իւր որդւոյն, Վահան էֆէնտի հետ, երէկ երեկոյեան Եւրոպական կառավարով մեկնեցաւ մայրաքաղաքէն ի Փարիզ:

— Արմաշու Դարեւանոց Փոխ-Տնօրէն Գեր. Տ. Եղիշէ Մ. Վարդ. Դուրեան չարթուս մայրաքաղաքս եկաւ արձակուրդի առթիւ, և Ս. Զատիկ տօնական առաջ համար Սամաթիոյ Ս. Գիորգ եկեղեցւոյ քարոզիչ կարգեցաւ տեղւոյն թաղ. Խորհրդոյ խորհրանօր. Տ. Եղիշէ վարդապետ Ս. Զատիկ տօնէն յետոյ պիտի դառնայ յիւր պաշտօնատեղին:

— Վանայ գլխաւոր երկրաշարի Մեծ. Պօղոս էֆ. Թագուրեան, որ տասը տարիներէ ի վեր կը պաշտօնավարէր անդ, չարթուս մայրաքաղաքս ժամանեց:

— Գնալը կղզւոյ քահանային և Թաղական Խորհրդոյ առաջարկութեամբ, Ս. Պատրիարք Հայրը մասնաւոր վկայագրով արտօնութիւն շնորհեց Կղզւոյ վարժարանին Տնօրէն-Դատաւոր Հայրապետ էֆ. Շնորհքեանի՝ եկեղեցւոյ մէջ ի ժամ Ս. Պատարագի Աւետարան և Հաւատամք ընթեռնուլ:

ՏՈՒԱՆԱՄԷ. Պատկերապարզ Աղօթագիրք ի պէտս թրքախօս Հայոց, կը պարունակէ ամէնէն յաճախ արտասանելի աղօթից թրքերէն թարգմանութիւններն՝ մեծ մասամբ հայերէն ընդգրկելով հանդերձ: Երես 160. Տպ. ն. Կ. Պէրպլեքեան: Գին 3 զր:

ՀԻՐ ԱՏԷՄԻՆ ՏՕՍԹՈՒ, եախօս Գալիլիսի իրաւունք Սընէթ. Սովետոյ Պատ. Յանձնաժողովոյ խնդրանք Տօթթ. Ս. Յ. Յակոբեանի հեղինակած «Նախնական գիտելիք առողջապահութեան» անուն տետրակն է այս, Այնթապի Ս. Վարդանեան կրթարանի ուսանողաց ձեռք թարգմանուած: Երես 72. ն. Կ. Պէրպլեքեան: Գին 60 ժր:

Կր ծախուին գրաւաճառաց, Պահճէ-Գարուի ջրաղաճառաց քով և Ուղտն Զարբ-պաշը, թիւ 42 ֆալաղ աշեան փորագրատունը: 5—5

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Շատերու համար դժուար է գուցէ հաւատալ թէ Ազգային Մատենադարան մը ունիմք ի Պոլս, մատենադարան մը մտաց արժանաւոր սնունդ մատակարարող, իրական պէտքի ծառայող, որ իւր դռներն բանայ ժողովրդեան ամէն դասակարգի մարդոց առջև. այդպիսի հասարակաց վայր մը լաւագոյն դպրոցն կը լինէր հասուն հասակին, որպէս և նորահաս երիտասարդին և պատանւոյն, մատենադարան լի հազարաւոր հին և նոր գրքերով, աւելորդ է ըսել նաեւ, լի բազմաթիւ գրական, գիտական, արուեստական հանդէսներով և լրագիրներով: Ի հարկէ այդ օգտակար հաստատութիւն ժամադրաւայր մը պիտի լինէր բազում սրտակից անձանց, լուսոյ նոր կեդրոն մը:

Եթէ յանուն Ղալաթիոյ Ազգային Մատենադարանի հաստատեալ ընկերութիւն չարունակուէր ցարդ, այս մասին ընդհանուր եղած բողոքները կը գոհանար ըստ կարի, և հետզհետէ բարեբար անձինք ստատար լինելով սոյն ձեռնարկութեան, զայն նախանձելի դըրից մէջ կը դնէին: Մեզ բողոքողին անծանօթ է թէ ինչո՞ւ այդ Գրասիրաց ընկերութիւն խափանուած է այժմ: Արդեօք փնտրուե՞մք սորա պատճառներն Պէրպլեքաւոյ Հայկազեանի, Իւսկիւտարու Ընթերցասիրաց, Կրքասիրաց, նոյնպէս այլ տեղեաց այս կարգի բազում ընկերութեանց դադարման պատճառներուն մէջ: Բայց թողու՞մք անցեալն և գտնե՞նք ներկային:

Մեզ հետ շատեր ուրախութեամբ լսեցին թէ նորակազմ Ուսումնական Խորհուրդն իւր առաջին նիստերն նուիրած է Ազգային Մատենադարանի բարեկարգութեան խնդրոյն: Զերմապէս խնդակցութեան արժանի է Խորհուրդն, երբ իւր պաշտօնավարութեան ըսկիզբն կը դնէ այսպիսի հանրօգուտ խնդիր մը. իւր բարձր հեղինակութիւն մեծ կշիռ ունի յայտմ. և յաջողութեան իսկ երաշխիք կը մատուցանէ ինքնին: Նոյնպէս մեծաւ բերրութեամբ ընթերցանք ի լրագիրս թէ իրենց բարեգործութեամբ հանրածանօթ Ազնուաշուք Էստեան հարազատք ի Բերաբարեանց ծախիւք պիտի հաստատեն Ազգային Մատենադարանի պաշտօնագոյն շէնք մը: Ահա լաւագոյն նշանք երջանիկ ժամանակի:

Այսպէս խալաւ պիտի դադարին տրտունջք Ազգային Մատենադարանի անկերպարան վիճակին դէմ, երբ ձեռնհաս անձերէ կազմեալ յանձնաժողով մը ստանձնէ Մատենադարանի վարդապետ հոգն, կամ թէ վերակազմուելով երբեմնի Ուսումնական ակումբն՝ իւր պաշտպանութեան ներքեւ առնու զայն, երբ յանուն Մատենադարանի ընկերութիւնն վերըստին հաստատուի, և նորանոր նպաստներ լինին, երբ այն կարենայ գոհացնել գրասիրաց արդար պահանջումներն: Այն ժամանակ ոչ ոք պիտի ըսէ մեզ թէ կեդրոն հարկ անհրաժեշտ է որ գաւառաց օրինակին հետեւի, ահա՛ Զմիւռնիա որ ունի իւր Հայ Ընթերցասունն, ահա՛ Տրապիզոն որ յաջողած է պահել հասարակաց Մատենադարան մը:

Որչափ որ գիտեմք, Պոլս՝ բաց ի ազգային կեդրոնակալ Մատենադարանէ՝ ունի ուրեք ուրեք Մատենադարաններ, զոր օրինակ Գասթրօ փաշայի Ս. Յակոբ եկեղեցւոյն կից կայ դրաղարան մը, յՕրթագիւղ՝ բաց ի Անտոնեան Միարանութեան ունեցած Մատենադարանէն, կայ նոյնպէս Թարգմանչաց վար-

ժարանին մէջ Մատենադարան մը որոյ բա-
նալին իսկէնտէր աղա անուն ծերունայ մը
քովն է կ'ըսուի . յիւսկիւտար ևս Ս . Խաչ
վարժարանի քով կայ գրատուն մը , նոյնպէս
Գուգարուի գրարի և Մայր-Եկեղեցւոյ մատե-
նադարանք , և թերևս ուրիշ տեղեր ալ գրա-
տունն այսպիսի մատենադարաններ : Գրարի-
տաբար անգործութեան դատապարտուած :
Արդեօք տեղի օգտակար չէ՞ր լինէր այս ա-
մէն Մատենադարանաց գրքերն տեղափոխել
ի Բերա կառուցանելի կեդրոնական ազգային
Մատենադարանն յօգուտ ընթերցասիրաց :
Կը յուսամք թէ ձեռնհաս իշխանութիւնն այս
կարեւոր կէտն իւր խորին ուշադրութեան
կ'առնու :

Կը փափաքեմք որ մեզ համար շատ հեռու
չը լինի այն օրն՝ երբ ազգային Մատենադա-
րանն իւր մէջ համախմբէ բազում օգտախն-
դիր անձնաւորութիւններ : Անուրանալի է
թէ քանի՞ օն օգտակար և հրահանգիչ է ըն-
թերցումն , երբ մանաւանդ ընկերակցու-
թեամբ լինի այն . ո՞ր առաւել եռանդեամբ
պիտի գիմեմք զիրար գտնելու , եթէ ո՛չ յԱզ-
գային Մատենադարան :

Երբ Մատենադարանն իւր բարձրագոյն
զարգացման մէջ լինի , կարող է նաև ամենայն
իրաւամբ գրքեր հրատարակել , զանազան օգ-
տակար գրքեր՝ որոց շատ մեծ պէտք ունի
ազգն ամբողջ , երբ իրականացեալ տեսնեմք
այս խորհուրդն ևս , այն ստեն պիտի ըսեմք
թէ Տիգրան Գրքերու Հրատարակչական Ըն-
կերութիւնն աստ ևս իւր քոյրն ունի Ազգա-
յին Մատենադարանի հովանւոյն տակ : Եւ
այսպէս երկուքն ի միասին կը ճոխացնեն ըն-
տիր գործերով մեր ազգային մատենադարանն :
Բայց այս կէտն ստագայի խնդիր մ'է տակա-
ւին , որոյ համար հարկ է բաւական ժամա-
նակ սպասել և յուսալ :

Մեր ազգային ներքին բարեկարգութեանց
խնդիրներէն մին այսպէս լուծուած նկատե-
լով այժմէն , ի սրտէ կը հաւատամք թէ Մա-
տենադարանի սահմանութիւնն , և հետզհետէ
նորա զարգացումն՝ ամէն գրասէր Հայ սլաւո-
նոց խնդիր մը կը նկատէ իւր անձին , և ա-
մէն կերպով իւր գերադանց աջակցութիւն
չզղանար երբէք : Կը մտախնդրեմք որ խնայող
ձեռնարկութիւնք յարատեւութեան ոգիէ ա-
ռաջնորդեալ ջնջեն շատերու մտքէն սա տը-
խուր համոզումն թէ մեք գիտեմք լաւագոյն
խորհուրդներ յղանալ , բայց կը տկարանամք
զանոնք իրագործելու մասին : Այդ պիտեաց
կարծիքն կը յաղթահարուի անշուշտ Մատե-
նադարանի պատուաբեր գրիւք և այլ նման-
օրինակ օգտաշատ ձեռնարկութեամբ , որոց
համար բազմաց հետ միշտ ցանկացող՝
Իւսկիւտար Ս . ԳԱՐԱՄԱՋԱՆ

ՎՐԻՊԼԿ . — Նախորդ յօդուածիս Բ . սիւ-
նակի վերջերն գրուած խոսքն բաւը , պէտք
է խոսան կարգաւ :

Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Հ Ի Ն Գ Ր Զ Ա Գ Ի Բ Գ

Ըստ խոստմանս ահա տակ հետզհետէ կը
ծանօթացնեմք գրչագրերս ուսումնասիրաց :

2. Սաղմոս

Թուղթք 164 — 138 : — Մեծութիւն
15×10 հմէր : — Գրութիւն միասին 10×
6 հմէր : — Տողք 16 — 18 : — Նիւթ՝ թուղթ

պինդ : — Կազմ , փայտակազմ կաշեպատ ըստ
արեւելեան ոճոյ : — Հանգամանք՝ մաքուր :
— Գիր՝ նոսրագիր մեծ : — Թանաքը սեռ ,
գլխագիրք կարմիր գրուած : — Տեղի գրու-
թեան՝ անյայտ : — Ժամանակ գրութեան գը-
րուած չէ թէպէտ , այլ գրէն և ուրիշ հան-
գամանքներէն կը կարծեմ թէ 600 տարուան
գործք մ'է : Գրիչ գրքին Տէր Գրիգոր : —
Ճակատ և վախճան չը կայ : — Սկիզբէն , մէջ-
տեղուանքէն և վերջէն թուղթ պահած է :

Տեղեկութիւնք . — Ա . գլուխն , 138-էն մինչ
8րդն պարունակէ 8 ծաղկեկար և գլխագիրք
մեծք և բազում փոքր գլխագիրք :

Բ . գլխոյն սկիզբն կայ 6 1/2 × 4 հմէր .
ծաղկեկար մը գունաւոր , որ ժամանակը
գունաթափ ըրած է . այդ ևս կրնայ ապա-
ցոյց մը նկատուիլ գրքին հնութեանն : Գը-
ծագրութիւնք այնչափ մաքուր չեն և կա-
րող հաւատարիլ Խաչատուր Երէց Կաֆայեց-
ւոյն Տօնացոյցին մէջ գտնուած նկարաց : Այս
գլուխ , 81րդ 138-էն մինչև 150րդ էջն , կը պա-
րունակէ գարձեալ 8 ծաղկեկար և գլխա-
գիրք մեծք :

Էջ 151-էն կ'սկսի Գ . գլուխն ուր կը գըտ-
նուի գարձեալ ծաղկեկար և հետզհետէ հա-
շուելով նկարներն և մեծ գլխագիրքն որ են
թուով 10 , էջ 248րդով կը վերջանայ և Գ .
գլուխն : Հոգ կը գտնուի յիշատակարանն որ
է

« Չանարժան տը . Գրիգորս յիշեցէք . յա-
ղաւթս ձեր եւ ած . ձեզ յիշէ . հայր մեղախ
ամէն : »

Էջ 249րդ կ'սկսի Դ . գլուխն ծաղկեկարիւ
և պարունակելով իւր մէջ 12 նկարք , գլխա-
գիրք , 353րդ էջի կը լրանայ Դ . գլուխն և
սաղմոսն : 354 — 368 էջերու մէջ կան , 1⁰
« Աղաւթ երից մանկանց » , 2⁰ երգ մարիամու
ածածնի . 3⁰ Աղաւթ սիմէովն ձերուցն :

368րդ էջի կը լրանայ Գիրքն :
3. Շարական

Թուղթք 330 : էջք 660 : — Մեծութիւն
14 1/2 × 10 հմէր : — Գրութիւն միասին 14 1/2
× 7 հմէր : — Տողք 21 — 22 : — Նիւթ՝ թուղթ
պինդ և դեղին : — Կազմ , փայտակազմ կա-
շեպատ ըստ արեւելեան ոճոյ : — Գիր , բո-
ւորգիր : — Թանաքն սեռ , գլխագիրք և
նկարք են գրուած կարմիր , կապոյտ , կանաչ
և այլ գոյներով : — Տեղի գրութեան ան-
յայտ : — Ժամանակ գրութեան չէ գրեալ ,
այլ գրէն կը կարծուի լինել 3—400 տարուան
գործ : — Գրիչ գրքին երէց Մարտիրոս : —
Պակաս են վերջէն մի քանի էջեր :

Տեղեկութիւնք . — Էջ 1 կ'սկսի Ա . գլուխն
« Երգեցէ՛ք որդիք մարդկան » շարականաւ , ո-
րուն վրայ կայ մեծ ծաղկեկար մը տկար գըր-
չի գործ , թէպէտ գլխագիրք բաւական յա-
ջող են և գեղեցիկ գունաւորք . 80րդ էջի
մէջ կը վերջանայ Ա . գլուխն « Սուրբ Սարգիս »
շարականաւ : Եւ 81 կ'սկսի Բ . գլուխն « Կա-
նոն բուն բարեկեցեացիի » շարականօք , և յ'էջ
182 կը վերջանայ Բ . գլուխն « Աւրհնեալ Եր-
ւոյն » հարցն մերոց » շարականաւ : Հոս է ա-
ռաջին յիշատակարանն՝ « Չանպիսան երէցս
զՄարտիրոս գրչակա աղաչեմ յիշել ի Եր » :

Եւ 183 կ'սկսի Գ . գլուխն « Այսաւր գոյով
ի բեղաճիւղ քո ամենազաւր հրամանաւ » շարա-
կանաւ , և յ'էջ 234 կը վերջանայ « Յարեաւ
Քրիստոս » շարականաւ : Եւ 235 կ'սկսի Դ .
գլուխն « Այսաւր յարեաւ ի մեռելոց փեսայն
անմահ » շարականաւ և կը վերջանայ յ'էջ 323 ,
ուր և կ'սկսի Ե . գլուխն « պէնդէկապէտի կա-
նոնաւ » և կը վերջանայ 422րդ էջի : Եւ 423

կ'սկսի Զ . գլուխն « Սուրբ Խաչի նաւակահաց
կանոնաւ » և կը վերջանայ յ'էջ 530 : Եւ 531
էջի կ'սկսի Է . գլուխն « Համբարէմ ամ . մարտիրո-
սաց կանոնաւ » և վերջանայ 572 էջի : Հոս է
երկրորդ յիշատակարանն « Չմեղսամաճ մար-
տիրոս գրիչս յիշեցէ՛ք ի Եր » : Եւ 573 կ'սկսի
Ը . գլուխն « Համբարէմ ամ . Գնեցեցեալ կանո-
նաւ » և վերջանայ յ'էջ 625 , ուր եւ կ'սկսի Թ .
գլուխն « Երգեսցուք Երգն որ այ . փրկչին մե-
րոյ » շարականաւ և 660 էջի վերջանայ Գիր-
քն :

Չ մոռնամք յիշել թէ ամբողջ շարականաց
վրայ կը գտնուին երաժշտական հայկական
խաղեր , եղանակներն որոշելու համար . նաև
ամէն գլխոց սկիզբն մեծ և տեղ տեղ փոքր
ծաղկեկարք կ'երևին . բազմաթիւ գլխագիրք
երբեմն կենդանակերպ են և երբեմն ալ ծաղ-
կեկարք :

ՎԱՋԱՆ Գ . ԶԱՐԴԱՐԵԱՆ

Հ Ո Վ Ո Ի Ո Ի Հ Ի Ն

Աւաւօտ եղաւ , արեւ կը ծագի ,
Եւ զարմնու իսկոյն փութկոտ հովուներ .
Կ'առնու իւր այծեր եւ ուլեր փոքրիկ ,
Կ'արածէ յարօտ , քաղէ խոտ ծաղիկ .
Աւ ծուներ ի դաշտին իւր աղօթք կ'ընէ ,
Ազատ է ամէն ցաւէ ու հոգէ :
Կը ծըծէ ցըլագ սուրբ օդն ու հողիկ
Որ շնչէ ընդ բնաւ յանդորր ու հեղիկ .
Խուրձեր կը կապէ այն խոտէն կանաչ՝
Այծերն եւ ուլեր վարելով յառաջ .
Կանթն կենսատու կրթէ իւր այծին ,
Մրմունջն ի բերան կ'երգէ զուարթալիս .
Եւ ապա նստած իւր սեռա գամփոխ քով՝
Խըմէ կանթն եւ ուտէ իւր հացիկն համով .
Կը սիրէ նա կանթն եւ հաց շինական
Քան քաղաքացւոյն խորտիկ պատուական :
Հուսկ ապա մաքուր եւ ջինջ առուակէն
Կ'անցնէ իւր ծարաւ , եւ կ'ոստնու անդէն :
Այլ ժամ է գործի . հանէ մախաղէն
Գուրպայն եւ հիւսէ խիստ արագօրէն :
Երեկոյ եղա՛ւ , զըւարթ հովուներին
Փառնէ իւր գուրպայն , դընէ ի պարկին ,
Եւ իւր այծերուն քաղցրիկ բըջինով
Կը փութայ դառնալ իւր ծննդաց քով .
Ուր ի վարձ ջերմ ջերմ համբոյսս բնուենի
Յանկեղծիկ շրթանց , ի սէր մայրենի .
Եւ յետ հաշիւոյ մանէ յանկողին ,
Ննչէ ցայգն ի բուն ըզբուն անմեղին :
Ե Ի Տ Ե Ի Պ Ե

« ԾԱՂԻԿ » ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

Շապին Գարահիսար . Ն . Օ . Թիւրքմենցութիւնն
ուզողութեամբ :

Տրապիզոն . Խ . Զ . Այդպէս չէին հասկցուցած .
ուզողութեամբ : 26 դրուշ պիտի վճարէ Նախորդ վեցամեկն
համար , 5 դրուշ աւելի միայն 2րդ թուոյն համար :

Երգնկա . Մ . Կ . Սկսածք զրկել , Բաժանորդագիրը
կամ մեր գործակալին յանձնեցէք կամ փոխարէնը նա-
մակագրուի զրկեցէք :

Կեսարիա . Դ . Ս . Ստացանք Գ . Տ . Վ . ի բաժնե-
գիրք , բայց Հ . Մ . ին բաժնեգիրք՝ որուն համար կը գը-
րէք թէ յղած են՝ չեմք ստացած :

Տիգրանակերտ . Մ . Կ . Կէս ոսկին գանձեցինք : Այդ
գրքերն ձեր առաջարկած զնչով կարելի չէ առնել ,
Ասանա . Ն . Վ . Դ . Ձեր ապրիլ 2 ի նամակն ևս
ստացանք : Կը կրկնէք թէ տեղւոյ բաժանորդաց ի
հաշիւ ցարգ և ոչ մէկ փարս ստացած , և այս պատ-
ճառաւ զողբեցուցած եմք թերթերու առաքուիլ :

Որոն ձեռօք կամ ի՞նչ միջոցաւ զրկած էք :



ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

(Շար. Գախորդ բուհ)

14.

Բուն խորհրդաւոր արարողութիւնը կը լրանայ զինի հաղորդութեան, երբ քահանայն «Կեցո Տէր զօղորդութեան» օրհնութիւնը կ'արտասանէ: Բայց խորհրդաւոր մասին կը յաջորդէ գոհարանութիւնն, որում հաւատացեալք ոչինչ նուազ պարտին մասնակցիլ քան թէ նախընթաց պաշտամանց: Քանզի երախտագիտութիւնն և ստացած բարեաց համար պարգեւողին շնորհակալութիւն յայտնելն մարդկային բնական զգացումն է: Բնականաբար Քրիստոս և իւր աշակերտք ալ անձամբ բարի օրինակ ցոյց տուին, երբ զինի առաջին Պատարագին, յատկապէս կը պատմէ Ս. Գիրքըն, «գոհացան» կամ ըստ միւս սուտարանչի «օրհնեցին և ելին ի լեռան ձիթեհեաց»: Յաւալի է որ այս կէտին մէջ ալ գովելի կամ օրինակելի ընթացք մը բռնած չենք: Կեցոյն զինի սովորաբար ժողովրդի մեծ մասըն, գրեթէ տասնէն ինն, շտապամբ եկեղեցին կը թողնէ իւր թէ մի շատ ստիպողական պէտք ունի երթալու կամ մէկ մօտալուտ վտանգէ կը փախչի: Թող այն՝ որ մեծ մաս մի եւս Առաքելոցի ժամանակ ահագին դժգոհութեամբ դուրս կ'երթայ: Բայց իրօք ի՞նչ կ'ընեն այս դուրս գնացողներն: Եկեղեցւոյ բակը կը պտտին, իրարու լէճ կը հարցնեն, ինքզինքնին և զիրար կը ծանօթացունեն մինչեւ Պատարագը լրանայ: Կամ եթէ այդքան բարեպաշտութիւն ալ չունին՝ կը վազեն սրբաբան և այդ ծանօթացուցիչ պաշտօնն անդ կը կատարեն: Անշուշտ ասոր բուն պատճառն ալ հոգեւորականաց անտարբերութիւնը և անձնական օրինակն է: Պէտք չէ կարծել թէ միայն Սրբութիւն առնողք պարտաւոր են մնալ մինչեւ ի վերջ, ներկայ պարագայից մէջ երբ հաւատացեալք յաճախ Պատարագին ներկայ կը գտնուին առանց իրօք ճաշակելու, պէտք է գէթ հոգեւորապէս հաղորդին, և քանի որ միւս արարողութեանց մասնակցեցան, պարտին նաեւ գոհարանութեան մասնակցիլ: Սուրբ Յովնանէս Ոսկերեան շատ խիստ կերպով կը պատարակէ այս յոռի սովորութիւնն և առանց գոհարանութիւն տալու դուրս գնացողը կը նմանցնէ Յուդային որ «առեալ զպատանոն՝ ել արտաքս վաղձաղակի» առանց սպասելու գոհարանութեան զոր Յիսուսի մնացեալ աշակերտք միասին մատուցին: Զ'ենք կարող այս տեղ վերստին չ'անարկել Պարսկահայոց սովորութեան, որք իւրեանց հեռաւոր առանձնութեամբն եկեղեցական օրհնեցներն աւելի խտուրտեամբ պահած կը թուին քան թէ ուրիշ կողմերու բազմամարդ քաղաքացի հայեր: Սովորութիւն է այն տեղ որ ամբողջ ժողովուրդն և քահանայք կը մնան եկեղեցւոյ մէջ մինչեւ Օրհնեալք ելեբուք, յետ որոյ իրեւն անհրաժեշտ պարտք կը համարին երթալ Աւետարանն համբուրել Պատարագչի ձեռքէն և ապա դուրս երթալ: Երբ եկեղեցւոյ դուռը կ'ընեն, այն տեղէն ալ չեն շտապիր, այլ մի քանի վայրկեան ևս հոն գլխաւորապէս զէպ յարեւելք կեցած Հայր մեր մը կ'ըսեն, երեսնին կը խաչակնքեն և ապա կ'երթան: Քահանայք ալ եկեղեցւոյ դուռն կ'սպասեն իրենց պատարագիչ եղբոր գալտեան, ժամանակին ոչ թէ անպէտք խօսակցու-

թեամբ, այլ գլխաւորապէս աղօթելով կ'անցնեն: Զինի գոհարանութեան, քահանայն «Իջեալ եկելով մէջ եկեղեցւոյն», Որ օրհնեալ օրհնութեան անման աղօթքն կ'աղօթէ, խնդրելով յԱստուծոյ որ հաւատացեալ ժողովուրդն, և մանաւանդ այն աւուր Պատարագի մասնակից եղողները, յամենայն փորձութենէ ազատ պահէ: Նաեւ աշխարհիս համար խաղաղութիւն կը հայցէ և եկեղեցւոյ զանազան պարագայից համար շնորհք և առաջնորդութիւն: Ս. Յովնան, որպէս և Ս. Ոսկերեանի պատարագամատոյցը, զինի Կատարումն Օրհնեցից զՏէր կ'ըսեն և կ'արձակեն առանց ի սկզբանէ Աւետարանն կարդալու, որ Համբարձեցոյ պատարագամատոյցի մէջ եւս չը գտնուի: Այս խորհրդաւոր ընթերցումն հնգետասներորդ գարու վերջերը արեւմտեան եկեղեցւոյ մէջ նախ ընդհանրացաւ, եւ գրեթէ տարակոյս չկայ որ մենք ալ անկէ առած ենք: Առաջները պատարագիչն զինի Պատարագի իրըն խորհրդածութեան յարմար նիւթ տաւածին կը կարդար առանգատան մէջ քահանայական զգեստները հանելն յետ, և հետզհետէ սովորութիւն եղաւ դեռ առանգատուն չմտած Սեղանի քով կեցած, սակայն լուեկայն կարդալ, ինչպէս որ մինչեւ ցարդ Լատինաց սովորութիւնն է այդպէս կարդալ: Իսկ մեր եկեղեցւոյ ժողովրդական ոգին պահանջեց անոր ընթերցումն բարձր ձայնիւ յունկն ամենայն ժողովրդեան: Պատարագի խորհուրդն, ինչպէս վերը տեսնուեցաւ, շատ անգամ իրեւն օրինակ կը նկատուի մարդեղութեանն Քրիստոսի, որով աստուածային բնութիւնը մարդկային բնութեան հետ հրաշալի կերպիւ միացաւ: և որովհետեւ մարդեղութեան խորհուրդն ամենէն պարզ կերպով Յովնանու Աւետարանի այս հատուածի մէջ հուշակուած է, ասոր համար նորա ընթերցումն զինի Պատարագի սովորութիւն դարձած է: Մի շատ ընդհանրացած սխալութիւն այս ընթերցման նկատմամբ այն է որ քահանայք սովորաբար ճաշու Աւետարանը գործածելով՝ այդ գրքի մէջ գտնուած վարդապետի երկրորդ աւուր ճաշու աւետարանն ամբողջովին կը կարդան: Մեր Պատարագամատոյցի մէջ այս աւետարանը մինչեւ 14 տան վերջը («Ի շնորհօք և ճշմարտութեամբ») նշանակուած է, և սորա ընթերցման խորհրդաւորութիւնն ալ այսքան կը պահանջէ և ոչ թէ մինչեւ 17 տան վերջը: Լատինացիք ալ միշտ մինչեւ 14 տունը կը կարդան և ոչ երբեք աւելի:

Մի ուրիշ զեղծում եւս այն է որ ոմանք քահանայք ըստ կամս ի սկզբանէ տեղ ուրիշ հատած («Ես եմ հաց կենաց») կը կարդան առանց մի բանաւոր պատճառի: Այսպիսի փոփոխութիւն կրնայ միայն այն ժամանակ տեղի ունենալ, երբ նոյն աւուր ճաշու աւետարանը ի սկզբանէ լինի և նոյն հատուածի կրկնումն աւելորդ համարուի, ինչպէս վարդապետի երկրորդ օրն: Այս է օրէնքն և առանց բանաւոր պատճառի եկեղեցւոյ վաղեմի աւանդութիւնը փոխել և խանգարելն յոյժ մեղադրելի է: աւագերիցունք պարտին խնդրուի հսկել այսպէս բաներու վերայ, և չթողուի որ զեղծում և չփոփոխութիւն մոնայ եկեղեցւոյ արարողութեանց մէջ:

ԹՈՐՈՍ Տ. Ի. ԶՈՒՂԱՅԵՑԻ

վարձապէս Աստուծաբանութեան



ԱՆՍՈՒԱՆԱԼԻ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Դ.

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ԶԱԿԱՏԱԳԻՐ

Ո՞վ իւր կենաց մէջ չը ճգնիր ճողորմիլ անողք ճակատագրին վճիռներէն, նա մանաւանդ մահուանէ՝ նորա վերջին վճիռէն: սակայն ճակատագիրը միտ չը դնէր իրեն ուղղուած խօսից և աղաչանաց, թերեւս կոյր լինելուն պատճառաւ (1), և ոչինչ կ'աւրէ իւր գրածէն: Ամէն ոք ճակատագրին անխուսափելի լինելուն համոզուած կը թողու դաշխարհս, այլ կանխաւ այդ համոզումն ունենալ շատ օգտակար է մարդկութեան: առայս կենդանի ապացոյց են զայդ ունեցող ազգաց և անձանց պատմութեան մէջ թողած փայլն ու արժէքը:

Ռոնէ Տէքարթ, որուն կեանքը պիտի ներկայագրեմ ի ստորեւ՝ իւր ծննդեան 295րդ տարեգարձին առթիւ, 16 տարեկան Լա Ֆրենչի յիսուսեանց կրթարանէն ելնելէ յետոյ, 12 տարի մերթ աշխարհային կենաց մէջ և մերթ՝ իւր հետեւող Մորիս տը Նասսովի և Պաւլիերիոյ Մաքսիմիլիէն Ա. դքսին՝ երկար ճամբորդութեանց մէջ ուզեց գտնել իւր կոչումը, բայց և ոչ մի ասպարէզ իւր ազատամիտ գաղափարաց յարմարեցաւ, զի ճակատագիրը սահմանած էր ի նմանէ յարուցանել փիլիսոփայութեան, բնագիտութեան և չափազիտութեան միանգամայն մեծ հայրերէ մին:

Տէքարթ կամ Կարդեսիոս ծնած է 1596 մարտ 31ին ի Լա Հէյ (Խնտր-է-Լուառ, Ֆրանսա): Իւր երկտասարդական կեանքը շատ արկածալից անցաւ, յապայն 1629ին Լա Ռոշէի պաշարումէն յետոյ, որուն անձամբ մասնակցեցաւ, յանկարծակի Ֆրանսայէն մեկնելով Հոլանտա գնաց, ուր բնակեցաւ 20 տարի: Իւր առաջին գրուածքը՝ ձառ վասն լուսոյ, որ Գոպերնիկի դրութեան վրայ հիմնուած էր, հրատարակութեան պիտի տար երբ Կալիւտի դատաւարտուիլը լսելով կասեցաւ, և երեք մեծ աշխատութիւններ իւր ընծայեց յաջորդաբար: ձառ վասն եղանակին ուղիղ առաջնորդելոյ զբանադասութիւն եւ որոնելոյ զնոստրութիւնն ի գիտութիւնս՝ 1637, Խոկմունք բնագիտական՝ 1641 և Սկզբունք փիլիսոփայութեան՝ 1644: 1637ին հրատարակեց նաեւ Երկրաչափութիւն, Բեկեկմունք լուսոյ և Օղեբեւոյթն անուն մատենաները: Իւր նոր վարդապետութիւնները բազմաթիւ սքանչացողաց կողմէ ծափահարուեցան, թէպէտ Մազարին տարեկան 1000 սկոլդի թոշակ մը շնորհել մերժեց իրեն, սակայն միւս կողմէն ալ բազմաթիւ վեհապետք զինքն իրենց պաշտօնը հրաւիրեցին, ի մէջ այլոց Շուէտի Քրիսթին թագուհին: Իրեն համակողմաց հետ թշնամիներն ալ շատցան, նա մանաւանդ յիսուսեան և բողոքական տառուածարանք զինքը խտրել կը հալածէին, և 1649ին ա'լ անկարող զգալով անձը անոնց դիմադրելու, Սթոքհոլմ գնաց Քրիսթինի արքունեաց մէջ անցնելու իւր կենաց վերջին պալուլը, որովհետեւ արդէն հիւանդագին գոլով Շուէտի

(1) ճակատագիրը, որդի Քառոսի և Գիշերոյ, հիթո-նոստութեան չափաւորածն էր: Իւր գրած օրհնեցները մահուանց անպատճառ: Կատարել տալու զօրութիւնն ունէր: Զինքը կոյր վիճակի մէջ կը ներկայացնէին, որով ինքն ալ չ'էր կարող գիտնալ իւր գրած անհեթեթ օրհնեցն: գաւազան մը և աստեղագաղթ թագ մ'իւր վեհապետի կարողութեան նշաններն էին: Իւր ոտից ներքեւ երկրագունտ մը և ձեռքը մահկանացուաց բողոք պատուակող սպիտակ մը կամ կոշիկ մը ցուցնող կշիռ մը:

մայրաքաղաքին խիստ կլիմային չը կրցաւ տու-
կալ և 1650 փետրուար 11ին յաւիտենակա-
նութեան աշխարհը փոխեցաւ: Իւր բարե-
կամները 1667ին աճիւնը Բարիզու Սէնթ-Է-
թիէն-տիւ-Մոն եկեղեցին փոխադրեցին:

Սովորաւոր նման Տէքարթ ալ նորոգիչ ոգի
մ'եղաւ մարդկութեան համար որուն մտաց
անհուն ճանապարհը բացաւ, և մեքենաբար
ուսանելու դրութեան վրայ բանադատու-
թեան յաղթութիւնը կազմակերպեց, իւր ձեռ-
քը միսած բոլոր գիտութեանց մէջ ծնող լոյս
մ'եղաւ, և իւր ամէն խօսքերը, մինչև իսկ
սխալանքը, դէպ ի ճշմարտութիւնը մեծ քայլ
մ'ընել տուած են ապագայ սերնդեան: Իր
բնագէտ՝ Սնեկուսի գտած հակազդեցութեան
կանոնին համար պարզ միջոց մը գտաւ, մըթ-
նոլորտային երևութիւնք ընդհանուր բացատ-
րութիւն մը տալ փորձեց, Անտոնիո տէ Տո-
մինիսի նախագծած և ապա Նիութընի կա-
տարելագործած ծիրանեզօտուոյ տեսութիւնը
տուաւ, Բասքալի փորձէն առաջ օդոյ ծան-
րութիւնը գնահատեց, և վերջապէս Նիութը-
նի մեծ գիւտը պատրաստեց շարժականու-
թեան օրինաց վրայ հիմնելով «նրին նիւթե-
րու յորձանաց» տարօրինակ կարծիքը, որոց
մէջ մոլորակները կը շրջին, կ'ըսէր, իրենց
կեդրոնն ունենալով արեգակն ու անշարժ
աստղերն: Թէպէտ այս կարծիքը շատ սխալ
էր, բայց այդու Վոլթէն և ԺԼ. դարն իրա-
ւունք չ'ունէին զինքն այնչափ մեղադրելու:
Իր անդամալնին և բնական՝ բժշկութիւնը
բարոյականութեան համար գործածել ուզեց:
Իր չափազէտ, գրահաշուոյ և երկրաչափու-
թեան ասպարէզն ընդարձակեց՝ կարողու-
թեանց նշանադրութեանը համար ցուցիչներ
գործածելով և վերլուծական երկրաչափու-
թիւնը հնարելով, որ սոյն գիտութեան մի
կարևոր մասը կը կազմէ: Իր բնազանցագէտ՝
Տէքարթ դրական տարակուսով մ'սկսող և
հաստատուն ստուգութեան մը յանգող նոր
տեսականութիւն մը ստեղծեց, որմէ կը ցայ-
տեցնէ բոլոր նախնական ճշմարտութիւնները,
իւր խորհուն արարած մը լինելն ու կատար-
եալ և անսահման էակի մը՝ Աստուծոյ գոյու-
թիւնը: Բայց իւր դրութեան չափազանցու-
թենէն այնպիսի անհեթեթ կարծիքներ ար-
տայայտած է, որոց վրայ ծանրանալ արժան է:

31. մարտ 1891

Վ. ԳԱԼԱՍՔՅԱՆ

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

ԳԱԼԱՍՏԻԱ, 18 մարտ 1891. — «Ծաղիկ»
թիւ 26ին մէջ կարգադրեց յարգոյ Վ. Գալ-
բաքճեանի Գալաթիա խորագրով ուղարկու-
թեան արժանի յօդուածը: Յարգելի յօդուա-
ծագիրը նկարագրած է ինչ որ հանրային է՝
առանց ճշմարտութենէ հեռանալու: Ես պի-
տի գրեմ՝ ձեզ ի մասնաւորի տեղւոյս հայազ-
գեաց վրայօք, որոց ընկերային ընթացքն
թէ և չափաւորեալ այլ ազգաց բաղդատմամբ,
այլ ազգային վիճակն կարի խոցոտիչ է:

Նոյն յօդուածի «Տարազագործութեամբ
ևս համաւաւոր է, նա մանաւանդ ալանաւ ը-
ստած տեսակով» պարբերութիւնը աւելի հե-
տաքրքրաշարժ է: Այդքան ծուլութեան և
մեղկութեան ինքնընտել ժողովուրդ մ'այդ-
պիսի յատկութիւն մը կրնայ ունենալ. աւե-
լի ճիշդ պիտի լինէր ըսել թէ, Գալատիա
համաւաւոր է տարազապատմամբ, նա մա-
նաւանդ ալանաւ ըստած տեսակէ, որ կը
բերուի Մարգուանէ՝ Մարգուանցի և այլ քա-

ղաքացի հայազգեաց, և Այնթապէ՝ Կիւրինցի
և Կեսարացի հայազգեաց կողմէ և այլ տեղե-
րէ:

Երեսփոխանական ժողովոյ ի Կ. Պոլիս վեր-
ընտրութեան ձեռնարկուիլը լրագրաց մէջ
կարգադրեց. այս խնդիր մտածմանց նիւթ ե-
ղաւ. Գալատիայէ ալ սոյն Երեսփոխանական
ժողովոյ մէջ ներկայացուցիչ մը կ'ուզուի և
պէտք է ինչպէս պիտի ընտրեն այդ անձը,
քանի որ ո'չ գլուխ ունիմք և ո'չ ոտք, ո'չ քա-
ղաքական ժողով և ո'չ ալ թաղական, ազգն
երեսի վրայ ձգուած՝ իրրեւ մի նաւ աննա-
ւապետ ալեծուփ ծովի մէջ: Տեղապահ Ս. Հայ-
րը ամիսներ յառաջ ջանաց, աշխատեցաւ և
վերջին ծայր դժուարութեամբ հաջիւ կրցաւ
կազմել թաղական Խորհուրդ մը, որոյ ընտ-
րութիւն ց'արդ և ոչ մի ժողով գումարեցաւ և
այժմ նորա և ոչ իսկ հետքը կը տեսնուի:

Տեղւոյս Հայք գրեթէ հաւաքածոյ մ'են,
մեծաւ մասամբ Կիւրինէ, Կեսարիայէ և այլ
տեղերէ գաղթած իբր երեք հարիւր տուն:
Արդ այսչափ Հայքս ա'ւ այժմ ունիմք երկու
կանգուն և մի կիսակործան եկեղեցիք, մինչ
ժամանակաւ ունէինք չորս եկեղեցի, Ս. Գէորգ,
Ս. Լուսաւորիչ, Բառասուն Մանկունք և Ս.
Հոգի, որք այժմ աղբանոց և մանկանց
խաղատեղի դարձած են: Երկու երեք տարի
յառաջ դեռ կանգուն էին Ս. Սարգիս (Կիսա-
կործան) եկեղեցւոյ կից Ս. Հոգի եկեղեցւոյ
երեք խորանաց կամարներ և պատեր: Երբ
դպրոցի աշակերտաց բռնադատումէ ճարա-
հատեալ փորձեցին պատ բարձրացնել գոնէ
սահմանները չ'կորսնցնելու համար, սակայն
ախոս' որ չը յաջողեցան Հռոմէականաց յա-
րուցած դժուարութեանց պատճառաւ:

Ար'դ, ոչ միայն այս եկեղեցւոյ, այլ միւս
երեք եկեղեցեաց սահմաններն ալ անյայտա-
ցած են, մէկը տանը ներսի մաս առնելով,
միւսը պարտէզ շինելով և այս միջոցներն ալ
չ'ունեցողը իւր տան փողոցը լայնցնելով...

Հ. Զ.

ԲԱՅԵՐԻ. 31 մարտ 1891. — Տեղւոյս Ազգ.
վիճակի յոռի կացութիւնը կը շարունակէ. ոչ
Ազգ. պատիւ և ոչ ալ օրէնք ու սահմանադ-
րութիւն ճանչող և յարգող կայ: Առաջնոր-
դէն 7-8 ամիսներէ ի վեր Ազգ. և կառավա-
րական գործերէ իսպառ ձեռք քաշած է. ե-
կեղեցականք ըստ քմաց ազատութիւն կը վա-
յելեն իրենց անվայելուչ և ապօրինաւոր ըն-
թացից մէջ և կարծես օր ըստ օրէ այդ ազատ
կենաց վարժուելով՝ փոթ ունին զայն աւելի
ևս ընդարձակելու, մոռնալով իրենց վրայ
գտնուած Քրիստոսական սուրբ կարգն ու
պարտականութիւններն:

Բաղադէն երեք ժամ հեռի Թաւմա գիւղի
Հմայեակ քահանան՝ որուն կինը մեռած է,
քանի մ'օր յառաջ կը յանդէնի ապօրէն կե-
նակցութիւն կատարել այն այրի կնոջ հետ,
որուն դժբաղդ ամուսինն վերջերս զոհ գա-
ցած էր ի Պոլիս երկաթուղւոյ անխնեւորուն
տակ մնալով: յիշեալ քահանայն այժմ զըր-
կուած կը մնայ իւր պաշտօնէն:

Պատրիարքարանն Երիզայի Առաջնորդա-
կան Տեղապահ Գեր. Տ. Բարթեղիմէոս վար-
դապետ քննիչ կարգած էր, ժամանակէ մ'ի
վեր տեղւոյս Առաջնորդի և աղբայնոց մէջ
ծագած խնդիրքը քննելու և տեղեկագրելու
առ Կեդրոնական վարչութիւնը. յիշեալն ան-
համբեր կ'ապառուի աստ, տայր Աստուած որ
Տ. Բարթեղիմէոս վարդապետ փութապէս

հասնելով և միանգամայն կատարելով անա-
չառապէս իւր պաշտօնն, յաջողէր բառնալ ի
հիմանց Բարեբրդի սովորական եղած երկպա-
ռակութեանց ու ատեղութեանց սերմերն:

Պատրիարքարանի ուղարկութիւնը կը հը-
րաւիրեմք Բարեբրդի ազգային դառն վիճակին
վրայ:

ԱՍԱՏՈՒՐ

ՊՐՈՒՍԱ, 1 ապրիլ 1891. — Տեղւոյս Ս.
Գէորգեան բարեհամբաւ վարժարանի չորրորդ
կարգի յառաջագէտ աշակերտներէն Պ. Նու-
պար Տ. Ահարովեան՝ յիշեալ դպրոցի Տնո-
րէնութեան կողմանէ հրաւիրուելով, յափյա-
փոյ ճառ մը արտասանած է՝ ի լուր Գէորգե-
ան սանուց, բարոյախօսելով ստախօսու-
թիւններէ յառաջացեալ անթիւ շարեաց և
զեղծմանց նկատմամբ:

Արդոյ Տնօրէն Էֆէնտին՝ շատ գոհ մնալով
արտասանեալ բարոյախօսութենէն, աւելի ըն-
դարձակած է առաջադրեալ նիւթն, կոչում
ընելով Տ. Ահարովեան պատանուոյն դասըն-
կերներուն՝ որ օրինակ առնուն իրենց հա-
մակրելի և տաղանդաւոր ընկերոջմէն, և գամ
քան զգամ պատրաստուին՝ մարդկային ըն-
կերութեան ծառայող օգտակար նիւթոյ վը-
րայ ճառելու:

Այս բանախօսութեան առթիւ վարժարա-
նի Պատ. Հոգաբարձութեան կողմանէ գրա-
ւոր շնորհակալութիւն յայտնուած է, որոյ
պատճէնն ահաւասիկ:

«Ուրախութեամբ կը կարգամք արձանա-
գրութեան մէջ թէ՛ Գ. կարգի ժրաջան ա-
շակերտներէն Պ. Նուպար Տ. Ահարովե-
ան շարաթ օր հրապարակային բարոյախօ-
սութիւն մը ըրած է իւր ընկերաց, նիւթ ու-
նենալով «ստախօսութեան վնասներն»: Հո-
գաբարձութիւնս գոհ մնաց յիշեալ Պարոնին
բարի յանդգնութենէն, որով թէ՛ իւր ընկե-
րաց քաջալերութիւն մը տուած է, և թէ՛ զա-
նոնք իւր բարի օրինակին հետեւելու առաջ-
նորդած, առ որ մեր շնորհակալութիւնը կը
յայտնեմք»:

ԿԵՍԱՐԻԱ, 19 մարտ 1891. — Փետր. ամ-
սոյ մէջ տեղի ունեցաւ քաղաքիս Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցւոյն Կիւմիւշեան վարժարանի
տարեկան հարցաքննութիւնը և մարտ 17 կիւ-
րակէ օրն ևս նոյն եկեղեցւոյն մէջ Գեր. Ս.
Հօր նախագահութեամբ և ի ներկայութեան
հոծ բազմութեան կատարեցաւ պարգևարաչ-
խութեան հանգէսը: Այս վարժարան վեց
տարի շարունակելով իւր ընթացքն, ունեցած
է 10 չրջանաւարտներ, որոց 6ը անցեալ տա-
րի և 4ը այս տարի: Անցեալ տարւոյ չրջա-
նաւարտք տակաւին չ'էին ընդունած իւր-
եանց վկայագրերն, բաց ի երկուքն որք օ-
տար երկիր երթալու ստիպեալ էին: Այս ան-
գամ մնացեալ չորսը և այս տարւոյ չորս չրջա-
նաւարտք Գեր. Առաջնորդ Հօր կողմանէ վա-
ւերացեալ վկայագրերն ընդունեցան: Անցեալ
տարւոյ չրջանաւարտք են Պարոնայք Ռուբէն
Լէմասեան, Պետրոս Մարթայեան, Գրիգոր
Էթմէքճեան, Յակոբ Վարժապետեան, Մեկ-
քիսեղեկ Մէլէճեան և Մկրտիչ Պուլադբեան:
Այս տարւոյ չրջանաւարտք են Պարոնայք Կա-
րապետ Իփիքճեան, Կարապետ Սէֆէրեան,
Յովհաննէս Բապուճճեան և Տիգրան Հաճընլը-
եան: Վարժարանին Տնօրէն-Գասապու Գա-
նիէլ էֆ. Սարրաֆեան առ Ուսումնաւարտս
ուզեց Հուսկ Բանն, որոյ պատճէնն ահա-
ւասիկ:

«Սիրելի Սանուհ»

«Յարգ անընդհատ հինգ տարի խօսեցայ ձեզ. թո՛ղ ձեր դատարարական ձայնը վերջին անգամ մ'ալ թռթռացնէ ձեր ականջը»:

Դուք ժրջան աշխատութեամբ այնքան ժամանակ շարունակելէ վերջ ձեր ուսմունքն, կ'աւարտէք աղքատիկ դպրոցիս աղքատիկ ծրարագիրն և կուգաք ստանալ հանդիսապէս ձեր վկայագիրն:

Գիտէ՞ք, ի՞նչ էր ձեր վիճակ երբ առաջին անգամ սոք դրիք լուսոյ տաճարին սեամէն ներս. ի՞նչ եղաք այժմ և ի՞նչ պիտի լինիք յապագային:

Մանուկ էիք տգէտ յամենայնի. ոչինչ կը ճանաչէիք. մայրենի քաղցրահնչիւն բարբառոյն մի բառն անգամ ծանօթ չէր ձեզ. ո՛չ զագգ կը ճանաչէիք, ոչ մարդկութիւն, ո՛չ նիւթական և ո՛չ բարոյական աշխարհն:

Վարժարանս աշխատեցաւ տալ ձեզ մի լաւ դատարարականութիւն, կրթել զձեզ մարմնապէս, մտապէս, բարոյապէս:

Խրատեց յար առաջը պահել ձեր մարմինն, ցոյց տուաւ ձեզ առողջապահիկ կանոններն: Ընդարձակեց ձեր մտաց հորիզոնն նորանոր գաղափարներով, ծանօթացոյց ձեզ հին և նոր ազգերն, նիւթական աշխարհն մեկին ուսոյց և տիեզերաց մասին չ'զլացաւ տալ պիտանի տեղեկութիւնները, և այլն:

Վարժարանս բացատրեց ձեզ ձեր պարտիքն, պարտիք առ Աստուած, առ նմանիս և առ անձն. բազմիցս ըսուեցաւ ձեզ լինել բարեպաշտ, գթած, ընկերասէր, պարկեշտ և բարեբարոյ: Այժմ կը թողուք զայս վայր, ունենալով շատ տարբեր վիճակ ձեր նախկին վիճակէն. կը մտածէք այժմ և կ'զլաք:

Հոս անցուցիք մանկական երջանիկ օրերն և կը հաւատամ թէ ոչինչ չեղան ձեր օրերն և ի վեր չ'վատնեցիք ժամանակն:

Սիրելի պարոնայք, կը մեկնիք աստի, սակայն ուր կը չուէք. կը թողուք դպրոցական խաղաղիկ կեանքն, գիտէք ուր կ'երթաք, մանկական դրախտէն շուտ դուրս ելած էիք. այժմ ևս վարժարանի դրախտին մնաս բարեաւ կ'ըսէք. բայց յո՞ք երթալք:

Կը նետուիք կենաց ասպարիզին մէջ, ասպարիզ տաքնապաշտոյ, կը պատրաստուիք պարգել ձեր թեւեր՝ նման նորափետուր թռուչնոյն՝ երթալու ու միտելու այն ընդարձակ միջոցին մէջ որ կը կոչի աշխարհ: Անգ ամէն տեսակ խոչնդոտք պիտի ներկայանան ձեզ, ձեր պարզ ու անամպ ճակատը խորշոմներով պիտի ծածկի, մտատանջութիւնք թանձր մառախուղի նման պիտի պաշարեն զձեզ. ցաւն իւր սուր ճանկերով ձեր աղիքն պիտի գալարէ և հառաչանքներ արձակելով մանկութեան սուուրք երջանկութիւնք ի վեր պիտի որոնէք. նոքա վաղ իսկ սլացած անցած են:

Մեք ուսուցիւք լինել Աստուածապաշտ, կանգնել արայեան Հայաստանեայց Ս. եկեղեցւոյն. նոր ասպարիզին մէջ շատեր պիտի ճգնին դիպումի արդիւնք համարել զտիեզերս և մեր կրօնն Սուրբ՝ շար մի յերիւրուածոց մարդկային նախապաշարմանց և կամ շահախնդրութեանց:

Ըսինք քան զամենայն ինչ՝ գեր ի վեր համարել զառաքինութիւն: Ո՛հ, արդեօք քանի՞ քանի՞ ստորնագոյն արարածք ջան ի գործ պիտի դնեն արածանել զարածանել զձեզ մտլութեանց աղբւրներու մէջ:

Բազումք պիտի գան բարեկամութեան դիմակին ներքեւ թախարհներ լարել, համուզել զձեզ ամէն ինչ զոհել ձեր մասնաւոր շահ:

Հուն և լոկ շահու մէջ փնտռել բարին ու մի միայն գորաւորն համարել արդար:

Ի մի բան նոր ասպարիզին մէջ պիտի գըտնէք շատ բան հակառակ ձեր ուսածին և յուսացածին:

Ամեն ուսուցիչ, նախանձ, ատելութիւն, արհամարհանք պիտի գան պատել պաշարել զձեզ:

Օ՛ն ուրեմն, սիրելիք, յասպարիզ, անհատն եղած է աշխատելու համար, մարդն յառաջդիմելու. դուք ալ պէտք է ճանչնաք ձեր պարտքը, պէտք է աշխատիլ, աշխատութեան պըտուղը քաղցրագոյնն է հաճոյից: Ջանացէք յառաջդիմել խնքնաշխատութեամբ և լերուք միշտ պարկեշտ, ուղիւ և անխորհախ. բարւոյն, ճշմարտին և գեղեցիկին լերուք յար ի խնդիր. բարի եղաք ցարդ և բարի լերուք միշտ. այլոց արտասուօք թրջուած չ'լինի բնաւ ձեր հացը. Արդարութեան և Սիրոյ օրէնք լիովին կատարեցէք:

Գթած լերուք միշտ. բաւ չ'է լիարուռն սիրել արծաթն. պարտիք բանալ նաև ձեր սիրտը, տուէք ձեր ժամանակը, խնամքը, սէրը, զձեզ իսկ. թշուառներն ու հիւանդները միտիւթարեցէք, նախատելոյն պաշտպան կ'անգնեցէք, լերուք մարդարարոյ, արդար, բարեբար, սիրեցէք զայլս և նոքա ևս կը սիրեն զձեզ:

Մի լինիք պատուհաս Ատտիլասի պէս, վըրիժառու Բրիւնհոյի պէս. ջանացէք ամենուրեք բարի հետք մը ձգել. թո՛ղ ամեն ուրեք զգալի լինի ձեր ներկայութիւնը, մարդկային ընկերութեան մէջ պատուաւոր դիրք մը գրաւեցէք, ամէն կողմ բարիք սիրեցէք, ձեր աչերէն թող ցողանայ լոյս, միշտ լոյս. վերջապէս, Սիրելի եղբարք, աշխատեցէք չապրիլ աննշան ձեր նշանաբանը թո՛ղ լինի մի բարձր բարոյականի տէր լինել:

Մտէք ուրեմն այսպէս պատրաստեալ և այս սկզբանց ծառայելու հաստատ որոշմամբ այս նոր ասպարիզին մէջ, առ ոտն կոխեցէք ամէն արդէք և յընչաց քերեցէք ամէն վըտանդ, և յաջողութիւնը ձերն է. և ահա այն ատեն քրտնաթոր ուսուցիչք ձեր կը փառաւորին ի սիրտ և ի հոգի, զի նոքա՝ քաջ գիտնալով նիւթական ամլութիւնն ուսուցչական ասպարիզին, լոկ բարոյական արդեանց դէտակն կան, և երբ իւրեանց սրտից հատոր աշակերտներն տեսնեն մարդկային ընկերութեան մէջ գրաւած մի բարձր դիրք, ահա այն իսկ են վարձք նոցա:

Ապա պիտի մոռանայք զայս վարժարան որ այնքան տարիներ ջամբեց ձեզ գիտութիւն և ուսմունք. առանց ի նկատի առնլոյ իւր աղքատիկ վիճակն՝ ամէն զոհողութիւն ըրաւ ձեզ հինգ տարի. վարժարանն տուաւ ձեզ յառաջդիմելու ընդունակութիւն. յայսմհետէ ճամբան հարթուած է, որքան կամիք կարող էք ընթանալ յառաջ:

Ուստի, Սիրասուն եղբարք իմ, կը մաղթեմ զի ձեր կեանքը լինի յաւէտ ծաղկալից մի գարուն, զի ձեր կենաց հորիզոնն անարև չ'մնայ երբէք և նորանոր յաջողութիւնք ամէն օր արշալոյսին հետ զեփիւռի թեւոց վրայ գան բարեկէ զձեզ:

Երթալք բարեաւ, Աստուած լինի ձեզ օգնական:

Ն Ե Ր Ք Ի Ն Լ ՈՒՐ ԵՐ

Երէկ Բամազանի 15րդ օրը լինելով, մեծավայելուչ կերպիւ տեղի ունեցաւ Խըր-գաի Շէրիֆի հանդէսը:

— Արդարութեան նախարարութիւնը նըկատելով որ գաւառակաց մէջ ընդհանուր դատախազի պաշտօնը վարող ոստիկանութեան պաշտօնեայք կարգաւ գրել չը գիտնալով, դատական գործերը պահանջուած կանոնաւորութեամբ չեն ընթանար, որոշած է որ կարող և յարմար յիսնապետները կոչուին այդ պաշտօնին:

— Վեհ. Սուլթանին յատուկ զօրօնաւել մը շինութիւնն յանձնարարուած է յԱնգղիա: Այս զօրօնաւել 242 անգլիական ոտք երկայնութիւն և ժամը 21 ծովային միոն արագութեամբ պիտի ունենայ:

— Ամերիկացի երկու երիտասարդք ութ տասն օր առաջ հեծելանիւով Էնկիւրիւ հասեր և փորձեր կատարեր են ի ներկայութեան տեղւոյն կուսակալին և այլոց: Ասոնք Պարսկաստանի ճամբով Չինաստան և այլուր պիտի ուղևորին:

— Սեւանիկի երեւելիներէն Համաթի պէյ՝ Վարտար գետը մաքրելու և նաւարկելի ընելու համար 53 տարւոյ մենաշնորհ ստացած է:

— Թագվիմի Վեգայէի մէջ կը կարգամբ հետեւեալները:

— Խարբերդի կուսակալութեան կողմէ ապրիլ 5 և 6 թուականներով Ներքին գործոց նախարարութեան ուղղեալ երկու հեռագիրք ծանուցած են թէ Մալաթիայ գաւառին Իտարէի ժողովոյ անդամներէն հայհոովմէական Չոլաքեան Գրիգոր աղա մէկ քանի օր առաջ գիւր մը սպաննուած գըտնուեր է իւր տան դրան առջև, թէ տեղւոյն ընդհանուր դատախազի օգնականն ու ոստիկանութեան պաշտօնեայք մինչև առաւօտ ամէն ջանք ի գործ դնելով, ձերբակալեր են ոճրին հեղինակներն որք նոյնպէս Հայեր են և թէ այդ գաւառին մէջ գտնուող ոչ-խալամ հասարակութեանց հոգեւոր պետերը գոհու-նակութիւն յայտնած են կառավարութեան կողմէ այս մասին ցոյց տրուած հոգածութեան համար:

— Պետական Խորհրդոյ գիւանին քարտուղարներէն Նախտ պէյ, որ ոսկորէ գրիչ մը հնարած էր, իւր գիւտին համար մենաշնորհ ստացած է և այդ գրիչի պատրաստութեան յատուկ գործիները պիտի շինուին Սէնայի վարժարանին մէջ:

— Բարձր. Նուպար փաշա կը պատրաստուի եղբր ապրիլ 29ին իւր թռուանց հետ Աղքսանդրիայէն Ֆրանսա երթալ՝ ամառը հոն անցնելու համար: Ն. Բարձրութիւն այժմ զբաղած է եղբր իւր յիշատակաւորանաց պատրաստութեամբ, զորս խիստ քիչ թուով ի Բարիզ հրատարակել պիտի տայ և միայն իւր բարեկամաց պիտի բաշխէ եղբր:

— Մայրաքաղաքիս մէջ գարեջուրի գործարան մը հաստատուելու արտօնութիւն խնդրած են գերմանացի մի քանի գրամատեարք:

— Երեքական տարւոյ չղթայակապ աշխատութեան, քաղաքային իրաւունքներէ վըրկուելու և ստացուածոց գրաւման դատաւարտուեցան ի բացակայութեան՝ Կեսարացի Փանոսեան Յակոբ և երկու եղբարքն, որք խարդախութեամբ սնանկութիւն հոգակած էին:

— Հացագործաց հացը 55 փարայի, իսկ սիւմիսիներուն հացը 45 փարայի բարձրացած է:

— Յեզիպաոս գլանիկներու մենաշնորհը ջնջուած և վաճառու մը հին դրութեան վերածուած է։ Գլանիկներու յեզիպաոս ներմուծման մաքսատուրքն ևս բարձրացած է։

— Բաղէշի Ախլաթ գաւառակի նախնական դատարանին անդամ Սատրգէֆէնտի, հարցաքննիչ դատաւորի օգնական Էսատէֆէնտի և ընդհ. դատախազի օգնական Սալիլէֆ. դատաստանի ենթարկուած են՝ Պապիկ անուն մարդու մը ժառանգորդներէն, հակառակ օրինաց, իրրեւ դատաստանի ծախք 17 Մէճիլիյէ առած լինելով։

— Վրացի գաղթական Նուրի անուն աւազակն, որ 5-6 տարիներէ ի վեր Չարչամուլայի կողմը կ'ստպարուէր, տեղական կառավարութեան անձնատուր եղեր է։

— Կարնոյ կուսակալ Հասան Սայրի փաշա Ալաշկերտէն Գարաքիլիսէ ուղեւորեր է։ Ն. Վսեմութիւն Ալաշկերտի մէջ երեք չորս օր մնալով, գաւառակին ընդհանուր գործոց վրայ քննութիւններ կատարել և փութացնել տուեր է այդ քննութեանց արդիւնքն եղող տնօրինութեանց գործադրութիւնը։

— Բալու գաւառակին կեդրոնին մէջ երկրաշարժ մը տեղի ունենալով, Զիվէի պահականոցը փլեր և զինուորներէ չորսը փլատակաց ներքեւ մնալով մեռեր, երեք տուներ եւս կործանել են։ Մարդու ուրիշ կորուստ պատահած չէ։

— Սարբերդի մէջ զրոյց ելնելով որ ավիոնի իւրաքանչիւր օխային վրայ 90 զրուշի մաքսատուրք դրուած է, ավիոն մշակողք ըսկըսած են ետ կենալ ավիոնի մշակութեան, սակայն Սարբերդի գաւառական թերթը կ'ըսէ թէ այդ լուր բոլորովին անհիմն է և հետեւաբար պէտք չէ հաւատ ընծայել այդ կարգի սուտ լուրերու։

— Տէրսիմի ցեղապետներէն Սուրգատէ Էյուպ աղա, որ Սարբերդի նահանգին կեդրոնը երթալով հնազանդութիւն յայտնած էր, կուսակալին կողմէ մեծարուելէ յետոյ իւր տեղը դարձեր է։ Տեղւոյն Իտարէի ժողովն եւս հարկ եղած գործողութիւնները կատարեր է, որպէս զի Էյուպ աղայի բարձրագոյն ներում չնորհուի։

— Ի նորոյ կազմելի Համիտիյէ հեծեալ-գնդին պատկանող Սնուսի թէքման գիւղախումբէն Զէրիքի Աշիրէթի ցեղապետն ու միւս ցեղապետք Երզնկա ուղեւորեր են։ Նոյնպէս Հայտէրանը Աշիրէթին Վանայ նահանգին մէջ գտնուած Հաճի Ալի աղայի խումբն, ինչպէս նաև Պայազիտի Անթապ գաւառակին մէջ գտնուած Հիւսէյին աղայի խումբը բաւական բազմութեամբ ճամբայ ելեր են Երզնկա երթալու համար։

— Անգլիական հպատակ Պ. Ֆ. Շառնո 99 տարւոյ մենաշնորհ ստացեր է «անթիմուան»ի եւ արծաթախառն կապարի հանքաց չահագործման զորս գտած է ի Բարխանձի և ի Հօրատի, Բասանտրի գաւառին մէջ (Զմիւռնիոյ նահանգ)։ Այս հանքաց չահագործումը պիտի սկսի առ առաւելն երկու տարիէն։

— Սարբերդի կուսակալութիւնը տեղեկանալով որ Հիւսնի մանսուրի ծիլիկեան գիւղէն մի քանի անձինք առանց պատճառի բանտարկուած են, քննութիւն բանալով՝ անոնց տնտեսութիւնը հաստատել և արձակել տուեր է զանոնք։

— Մարտի 1էն 31, Օսմ. ծխախոտի Բէ-թիի հասցիք 162 հազար Օսմ. ոսկւոյ բարձրացած են, մինչ 1891 ամի միւսնոյն ամսոյ հասցիքից գումարն էր 147 հազար ոսկի։

— Մայրաքաղաքի և Թուրքիոյ միւս քաղաքաց մէջ գտնուած օթէլներու համար պատրաստուած կանոնադրի մը համաձայն, որ վաւերացած է Կայս. Իրատէով, յետ այսորիկ իւրաքանչիւր օթէլի դրան վրայ տախտակ մը պիտի դրուի յորում գրուած լինի օթէլին ու տիրոջ անունները։ Օթէլներու մէջ տուժարներ պիտի գտնուին, յորս պիտի նշանակուին օթէլը եկող ու մեկնող թէ՛ տեղացի և թէ՛ օտարական հիւրերու անունն ու գրաւումն և ժամանման ու մեկնման թուականները։ Այդ տուժարի մէկ պատճէնը որոշեալ ժամանակաց մէջ պիտի հաղորդուի օստիկանութեան այն պահականոցին, որուն չրջանակին մէջ կը գտնուի Օթէլը։ Ասոր հակառակը գործող օթէլի տէրերը դրամական սուգանաց պիտի ենթարկուին։

— Վեհ. Սուլթանին հրամանաւ բանակցութիւնք պիտի կատարուին Բրիւրի զինագործարանին հետ՝ Թուրքիոյ զանազան կողմերը գտնուած ամրութեանց սպառազինումն առաւել ևս կատարելագործելու համար։

— Սապահ կը գրէ թէ Ագրիանուպոլսոյ առևտրական դատարանը սնանկ հռչակած է տեղւոյն Ալի Փաշա չուկային մէջ կտաւաժառ Յարութին Էֆէնտին, որուն խանութն ու տան մէջ գտնուած շարժուն ստացուածք կնքոյ ներքեւ առնուեր են։

— Երուսաղեմայ յունական Պատրիարքարանի կողմանէ երկու եպիսկոպոսէ և երեք վարդապետէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը Պէյրութ ուղեւորելով յիւր պաշտօնատեղին առաջնորդեր է Երուսաղեմի նորընտիր Պատրիարք Տ. Կէրասիմոսն։

— Լէֆթէնէն Ի Պիլէճիկ նորաշէն երկաթուղւոյն բացումը տեղի պիտի ունենայ մայիսի 1/13ին։

— Սուրէյի Հիւսայունը Պէյրութ տանելու համար յատկացեալ Իտարէի Մախսուսէի Տօլմա Պահչէ չոգէնաւը անցեալ երեքշաբթի օր Իզմիր հասեր և յաջորդ օրը մեկնել է ի Պէյրութ։

Ա Ր Թ Է Ք Դ Ր Ա Մ Ո Յ			
Օսմ. լիւրան 100 դր. էն			
Մէճիտիյէ	108 10	Վ. Եջնոյ	103
Քառորդ մէճիտ	106 10	Բուսիւյ բօլ	90 10
Մանր մէճիտ	101 10	Նաբոլէոն	87 22
Մէթալիք	99	Գրիմից	51 20
Պէշիք	102	Անգլ. լիւր	140 15
Մանէթ թղթադրամ 7 70			
Գ. Նապոլէոն (երեկոյ.)	20 25	Բուս. երկ բաթին	75 1/4
Թահվիլ Օսմ. 4 օլ	83 34	Թապիլիյէ	47
ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ			
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ			

Հ Ա Ր Ս Տ Ա Ն Ա Լ Ո Ւ Մ Ի Ա Կ Մ Ի Զ Ո Ց

ԱՃԱՊԱՐԵՑԷ՛Ք ՓՈՐՁԵԼ ԶԵՐ ԲԱՂԴԵ, ԵԹԷ ԿՈՒՁԷՔ ՇԱՀԻԼ

600,000 ԿԱՄ 300,000 ՅՐԱՆՔ

Միայն եօթն ու կես Ղրոշով

Ա Ռ Ի Թ Ը Մ Ի Փ Ա Ն Յ Է Ք

Ամէն անոնք որ հարստանալ կ'ուզեն, պարտին անմիջապէս դրել ստորեւ նըշանակեալ հասցէին և ստանալ Արեւելեան երկաթուղւոյ պարտատոմսից 128րդ վիճակահանութեան բաղդատոմսերէն։ Սոյն բաղդատոմսեր վաւերացեալ և ստորագրեալ են Օսմանեան Առևտրական նախարարութեան, և անոնց համապատասխանող պարտատոմսերն առ ի ապահովութիւն ի պահ դրուած են Օսմ. Կայսերական Պանգան. Դին տոմսի 7 1/2 զրուշ. վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ Կայս. Արքունի Փողերանոցին մէջ յառաջիկայ Մայիս 20ին։

Այս անգամուան մեծ պարգէն է

300,000 ՅՐԱՆՔ

600 թիւեր եւս այլ և այլ մեծ պարգէններ պիտի շահին, և շահոյ թուոց յոլցակը պիտի հրատարակուի ՇԱՀԻԿԻ մէջ։

Նոյնպէս շահող թուոց պարգէնները անմիջապէս կը զրկուին իրենց հասցէներուն (ոսկի լինելով)։

Գաւառներէն դրամի տեղ նամակադրոշմ կ'ընդունուի։ Բաւարիական համար պէտք է 40 փարայ աւելի զրկել։

Մեր հասցէն՝

Առ Տնօրէնութիւն Ժիւլիանի և Անտոնի Պրամատան 23, Ղալաթիա, Բարաքէյ, 23, Կ. Պօլիս